ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հուլիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

92
(3301)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԼԱՎԵՐԴՈՒՑ՝ ՎԱՆԱՁՈՐ. ՓՈԽԵԼ Է ԳՐԱՆՑՈՒՄԸ

Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը, որը 2023 թվականին պարտություն կրեց իր ծննդավայր Ալավերդու քաղաքապետի ընտրություններում, այնուհետեւ վերադարձավ Ազգային Ժողով՝ զբաղեցնելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորի մանդատը, իսկ ավելի ուշ նշանակվեց Լոռու մարզպետ, այժմ պատրաստվում է հերթական քաղաքական փորձությանը՝ այս անգամ արդեն Վանաձորի համայնքապետի ընտրություններում:

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ Արեն Մկրտչյանը փոխել է իր մշտական գրանցման հասցեն. նա արդեն գրանցվել է Վանաձոր քաղաքում: Մեր տեղեկություններով՝ այդ քայլը պայմանավորված է առաջիկա ընտրություններին մասնակցելու մտադրությամբ:

Բանն այն է, որ Ընտրական օրենսգիրքը համայնքի ղեկավարի կամ ավագանու ընտրություններին մասնակցելու համար սահմանում է համայնքում մշտական գրանցման եւ բնակության պահանջ: Հենց այդ հանգամանքն էլ, ըստ մեր աղբյուրների, դարձել է գրանցման փոփոխության պատճառը: Ինչպես հայտնի է, արդեն որոշում է կայացվել Վանաձոր համայնքի խոշորացման վերաբերյալ, ինչին պետք է հաջորդեն համայնքի ավագանու նոր ընտրություններ: Այս պահին համայնքը ղեկավարում է Արկադի Փելեշյանը՝ առավել հայտնի ԱԿԱ մականունով: Հատկանշական է, որ հենց այն ԱԿԱ-ն, որի քրեական անցյալի վրա «Քաղաքացիական պայմանագիրը» տարիներ շարունակ աչք է փակել:

Հիշեցնենք, որ ընդդիմադիր ուժերի կողմից ընտրված համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանին ընտրվելուց հետո ՔՊ-ն բանտարկեց ու մոտ 4 տարի պահեց բանտում՝ նախընտրելով քրեական ճանապարհի անցած Արկադի Փելեշյանի հետ համագործակցել, քան թույլ տալ, որ ընդդիմությունը աշխատի Վանաձորում քաղաքապետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ նոր ձեւավորված Ազգային Ժողովը դեռ ամբողջությամբ չի սկսել իր աշխատանքը, չի էլ ձեւավորվել, արդեն գործընթացներ են սկսվել պատգամավորների նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն այս օրերին աշխատում է ընդդիմադիր երկու պատգամավորների վերաբերյալ միջնորդությունների վերջնական փաթեթների վրա եւ մտադիր է դրանք ներկայացնել արդեն նոր ձեւավորված խորհրդարանին: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խոսքը վերաբերում է ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանին եւ «Ուժեղ Հայաստան» խմբակցության ղեկավար Նարեկ Կարապետյանին: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ երկու միջնորդությունների վրա աշխատանքն արդեն ավարտական փուլում է: Մեր զրուցակիցների պնդմամբ՝ դատախազությունում փաստաթղթերի նախապատրաստման հիմնական աշխատանքներն արդեն իրականացվել են, եւ նախատեսվում է, որ դրանք կներկայացվեն Ազգային Ժողովին՝ վերջինիս լիարժեք ձեւավորումից հետո: Թե հատկապես ինչ իրավական հիմքերով են պատրաստվում ներկայացվել այդ միջնորդությունները, ինչ քրեական վարույթների շրջանակում են դրանք կազմվում, եւ ինչ գործողություններ են նախատեսվում պատգամավորների նկատմամբ, առայժմ պաշտոնապես չի հրապարակվում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը հրապարակավ հայտարարել է, որ չի պատրաստվում առաջադրվել ՀՖՖ նախագահի պաշտոնում հաջորդ ընտրություններում, ֆուտբոլային աշխարհում կրքերը ոչ թե հանդարտվել են, այլ ավելի են թեժացել: «Ժողովուրդ» օրաթերթի ֆուտբոլային աղբյուրները փոխանցում են, որ ՀՖՖ նախագահի պաշտոնի շուրջ արդեն ձեւավորվել են մի քանի ազդեցության կենտրոններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նախընտրելի թեկնածուն եւ փորձում է մինչեւ ընտրությունները ստեղծել անհրաժեշտ քաղաքական եւ ֆուտբոլային աջակցությունը: Մեր տեղեկություններով՝ ամենաակտիվ քննարկվող անուններից մեկը Սիսակ Գաբրիելյանն է: Ֆուտբոլային շրջանակներում մեզ փոխանցում են, որ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի ազդեցության թուլացումից հետո Սիսակ Գաբրիելյանը նույնպես զգալիորեն կորցրել է իր նախկին քաղաքական հենարանը, եւ այժմ նրա համար ակտիվ լոբբիստական աշխատանք է տանում ֆուտբոլային ակումբներից մեկը՝ փորձելով ապահովել անհրաժեշտ աջակցությունը, որպեսզի ապագայում հենց նա ընտրվի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ: Սակայն սա միակ սցենարը չէ: Մեր տեղեկություններով՝ ՀՖՖ նախագահի պաշտոնի նկատմամբ հետաքրքրություն ունի նաեւ շրջակա միջավայրի նախարար, ԱԺ պատգամավոր ընտրված Հակոբ Սիմիդյանը, որը վերջին շրջանում փորձում է ապահովել ՀՖՖ-ի եւ կառավարության միջեւ կապը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Երբ ֆրանսիական «Վեոլիա Ջուր»-ը ստանձնեց Հայաստանի ջրամատակարարման համակարգի կառավարումը, խոստումները մեծ էին՝ եվրոպական փորձ, ժամանակակից կառավարում, որակյալ ծառայություն եւ սպառողակենտրոն մոտեցում: Տարիներ անց, սակայն, խմբագրությանը հասնող բազմաթիվ ահազանգերը բոլորովին այլ պատկեր են ներկայացնում: Այս հրապարակման նպատակը մեկ անձի դժգոհությունը ներկայացնելը չէ: Վերջին ամիսներին մեզ դիմած քաղաքացիների պատմությունները հաճախ կրկնում են միմյանց՝ անկախ բնակավայրից: Այդ պատճառով առաջանում է հարց՝ խոսքը առանձին դեպքերի՞ մասին է, թե՞ համակարգային խնդիրների: Քաղաքացիները պատմում են, որ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկները հաճախ չեն պահպանվում: Նրանց փոխանցմամբ՝ ընկերության ներկայացուցիչները երբեմն պատճառաբանում են, թե սպառողների թիվն ավելացել է, եւ գործող համակարգը չի հասցնում ապահովել նախատեսված ծավալները: Եթե այդպես է, առաջանում է տրամաբանական հարց. ինչո՞ւ են նոր բաժանորդներ միացվում այն ցանցերին, որոնց սպասարկման հնարավորությունները, ըստ նույն հիմնավորման, արդեն սահմանափակ են: Եթե ենթակառուցվածքը ծանրաբեռնված է, ապա ինչպե՞ս է գնահատվում դրա թողունակությունը մինչեւ նոր միացումների թույլտվությունը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ՍԱ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹ Է ԿՐԵԼ»

Շտաբօգնության բուժակ (ֆելդշեր) Գոռ Ավրցյանն այցելել է ArmLur.am-ի խմբագրություն, ներկայացրել իր խնդիրը: Նա պնդում է՝ քաղաքական հայացքների համար իրեն աշխատանքից ազատել են: Նա նաեւ նշեց, որ եւս երկու հոգու ազատել են աշխատանքից՝ ընդդիմադիր հայացքներ ունենալու պատճառով:



- Պարոն Ավրցյան, դիմել եք մեր խմբագրություն՝ նշելով, որ աշխատանքից ազատվել եք Ձեր ընդդիմադիր քաղաքական հայացքների պատճառով: Խնդրում եմ ներկայացնել՝ որտեղ եք աշխատել եւ ինչ հանգամանքներում եք կորցրել աշխատանքը:

- Աշխատել եմ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ում՝ որպես հերթապահ բուժակ: Արցախից բռնի տեղահանված եմ եւ երբեք չեմ թաքցրել իմ ընդդիմադիր քաղաքական հայացքները: Իմ համոզմամբ՝ հենց դրա պատճառով էլ ենթարկվել եմ ճնշումների, որոնք վերջապես ավարտվել են աշխատանքից ազատմամբ:

- Ի՞նչ ճնշումների մասին է խոսքը:

- Բազմիցս ակնարկվել է, որ անհրաժեշտության դեպքում աշխատակիցներին կարող են ստիպել աջակցել Նիկոլ Փաշինյանին: Քանի որ ես երբեք չեմ կիսել գործող իշխանության քաղաքականությունը, մշտապես հայտնվել եմ ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ինձ զրկել են լրիվ դրույքով աշխատելու հնարավորությունից, չեն տրամադրել պարգեւավճարներ, անընդհատ ստեղծել են լարված մթնոլորտ:

- Դուք մասնակցե՞լ եք ընդդիմության հանրահավաքներին աշխատանքային ժամերին:

- Ոչ: Բոլոր մասնակցություններս եղել են բացառապես իմ ազատ օրերին: Աշխատանքի ընթացքում կատարել եմ միայն իմ մասնագիտական պարտականությունները:

- Ինչպե՞ս է կայացվել աշխատանքից ազատելու որոշումը:

- Փետրվարի 20-ին հերթապահությունից հետո, ինչպես միշտ, հանձնել եմ ամբողջ գույքն ու դեղորայքը: Սակայն մոտ կես ժամ անց ավագ բուժքույրը զանգահարեց եւ սկսեց պահանջել այնպիսի պարագաներ, որոնք իր ներկայությամբ արդեն հանձնել էի: Այդ դեպքից հետո սկսեցին իմ դեմ ծառայողական խնդիրներ ձեւակերպել, թեեւ գործընկերներս հաստատել են, որ ամեն ինչ պատշաճ կարգով եմ հանձնել:

- Ո՞վ էր այդ ժամանակ տնօրենը:

- Ռուբեն Գրիգորյանը: Նա միակողմանի լուծարել է իմ աշխատանքային պայմանագիրը: Ավելի ուշ նոր տնօրենի՝ Հարություն Հարությունյանի մոտ դիմեցինք՝ խնդրելով վերականգնել աշխատանքս, հաշվի առնելով, որ Արցախից տեղահանված եմ, խնամում եմ անչափահաս քրոջս, իսկ մայրս առողջական խնդիրներ ունի:

- Ի՞նչ պատասխան ստացաք:

- Մեր ներկայությամբ, ըստ իմ պնդման, տնօրենը մորս պահանջել է Նիկոլ Փաշինյանին անվանել «վարչապետ»: Երբ մայրս հրաժարվել է, մեզ կոպիտ ձեւով դուրս են հրավիրել աշխատասենյակից:

- Դուք նաեւ նշել եք կոռուպցիոն դրսեւորումների մասին:

- Այո՛: Իմ պնդմամբ՝ ավագ բուժքույրը լրացուցիչ հերթապահություններ տրամադրելու համար պահանջել է 20 հազար դրամ: Այդ փաստով արդեն նախաձեռնվել է քրեական վարույթ: Փաստերը, այդ թվում՝ ձայնագրությունները, ներկայացված են իրավապահ մարմիններին:

- Նման դեպքեր այլ աշխատակիցների հետ եւս եղե՞լ են:

- Իմ տեղեկություններով՝ այո: Կարծում եմ՝ սա համակարգային բնույթ է կրել:

- Ի՞նչ է նշված աշխատանքից ազատման պաշտոնական հիմքում:

- Պաշտոնապես նշվել է, թե երկու աշխատանքային օր չեմ ներկայացել աշխատանքի, եւ այդ հիմքով միակողմանի լուծարվել է պայմանագիրս: Սակայն ես համոզված եմ, որ իրական պատճառը իմ քաղաքական հայացքներն են:

- Ներկայումս ի՞նչ եք պահանջում:

- Պահանջում եմ օբյեկտիվ քննություն, իմ իրավունքների վերականգնում եւ պատասխանատվության ենթարկել բոլոր այն անձանց, ովքեր, իմ համոզմամբ, իրականացրել են քաղաքական հետապնդում եւ ապօրինի գործողություններ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանական կուլիսներում քննարկվում է, թե ով պետք է փոխարինի Ռուբեն Ռուբինյանին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հատուկ բանագնացի պաշտոնում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս պահին դիտարկվող միակ թեկնածուն ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն է, որի թեկնածությունն իշխանությունները մտադիր են առաջադրել:

Ըստ ArmLur.am-ի աղբյուրների՝ Կոստանյանի թեկնածությունը նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի նախընտրությունն է, քանի որ նա համարվում է նախարարի ամենավստահելի գործընկերներից մեկը:

Միաժամանակ, մեր տեղեկություններով, թեկնածությունը պետք է ընդունելի լինի նաեւ թուրքական կողմի համար, ուստի հարցը դեռեւս ենթակա է քննարկման նաեւ նրանց հետ:

ArmLur.am-ը փորձեց ճշտել տեղեկությունները նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանից: Վերջինս, ի պատասխան մեր հարցի, ասաց. «Նման քննարկում չի եղել»:

Հարցին, թե առաջարկի դեպքում կընդունի արդյոք հայ-թուրքական հարցով հատուկ ներկայացուցչի պաշտոնը, Կոստանյանը պատասխանեց. «Ես արտաքին գործերի նախարարի տեղակալ եմ եւ կատարում եմ վարչապետի եւ արտաքին գործերի նախարարի հանձնարարականները»:

Մենք փորձեցինք մեկնաբանություն ստանալ նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակից, սակայն նա տեղեկացրեց, որ գտնվում է արձակուրդում, իսկ նախարարության լրատվության վարչությունում մեր զանգերը մնացին անպատասխան:

Հիշեցնենք, որ Ռուբեն Ռուբինյանը դարձել է ԱԺ նախագահի թեկնածու, այդ պատճառով չի շարունակելու բանագնացի իր գործունեությունը:

ՍՈՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

40 ՀԱԶԱՐ ՏՈՆՆԱ ԲԵՌ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Շուշիում կայացած մեդիաֆորումի ժամանակ հայտնել է, որ Ադրբեջանի տարածքով Ռուսաստանից եւ Ղազախստանից Հայաստան է տեղափոխվել ավելի քան 40 հազար տոննա տարբեր բեռներ: Բացի այդ, Ադրբեջանն ինքն է սկսել նավթամթերք մատակարարել Հայաստան: Նրա խոսքով՝ հանձին Ադրբեջանի՝ Հայաստանը ստացել է մատակարարումների հուսալի աղբյուր. «Եթե նման հնարավորություն չլիներ, Երեւանը ստիպված կլիներ անհրաժեշտ ռեսուրսները փնտրել ամբողջ աշխարհում»:

Անդրադառնալով 907-րդ ուղղմանը՝ Ալիեւը հայտարարել է, որ այն հնացած է եւ պետք է չեղարկվի: Նա հիշեցրել է, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մեկ տարով կասեցրել է դրա գործողությունը, սակայն քաղաքական իմաստով այն դեռեւս պահպանվում է:

Ադրբեջանի նախագահն ընդգծել է, որ որքան շուտ ԱՄՆ Կոնգրեսը լիովին չեղարկի ուղղումը, այնքան ավելի օգտակար կլինի բոլոր կողմերի համար: Նա հույս է հայտնել, որ նման որոշում կկայացվի: Միեւնույն ժամանակ, Ալիեւը նշել է, որ ամերիկյան ներկայիս վարչակազմի օրոք ուղղումը փաստացիորեն ոչ մի դեր չի խաղում:

ԽԱԺԱԿՅԱՆԸ ԼՔՈՒՄ Է

Դավիթ Խաժակյանը լքում է Էդմոն Մարուքյանի ղեկավարած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը: Այս մասին տեղեկանում ենք Դավիթ Խաժակյանի ֆեյսբուքյան էջում հրապարակված հայտարարությունից:

«21 տարեկանում հեշտ չէր որոշել դառնալ կուսակցական եւ զբաղվել քաղաքականությամբ: Գիտակցված եւ բարդ ընտրություն էր, որի համար ափսոսանք չունեմ:

Այս տարիներն ինձ համար եղել են քաղաքական հասունացման եւ զարգացման կարեւոր շրջան: Հումորի էր վերածվել այն, որ ամեն հաջորդ ընտրությանը իմ տարիքը չէր բավականացնում թեկնածու առաջադրվել: Բարեբախտաբար այդ «խոչընդոտները» եւս հաղթահարվեցին:

Փորձել եմ լինել թիմային խաղացող՝ հպարտանալով մեր համատեղ ձեռքբերումներով եւ պատասխանատվություն կրել ձախողումների համար:

Շնորհակալ եմ բոլոր նրանց, ում հետ այս ճանապարհը միասին անցել ենք՝ գործընկերներիս, նախկին եւ ներկա թիմակիցներիս, ինչպես նաեւ կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանին, ում վստահել եմ, ումից սովորել եւ ում հետ միասին ծառայել եմ մեր պետությանն ու ժողովրդին:

Խորհրդարանական ընտրություններին չմասնակցելը իմ ընտրությունն էր, իսկ այժմ նաեւ Լուսավոր Հայաստան կուսակցությունում իմ առաքելությունը համարում եմ ավարտված՝ թողնելով ջերմեռանդ երիտասարդական ջանքս եւ ինձ հետ վերցնելով մեծ փորձառություն, ջերմ հիշողություններ եւ բազմաթիվ լավ ընկերներ:

«Ես հեռանում եմ, որ դառնամ, հազար փակված դռներ բանամ: Հիմա գնամ, բարով մնաք...» - Մեսչյանական այս խոսքերով ավարտում եմ հաղորդագրությունս՝ անցած ճանապարհը վերարժեւորելով եւ շարժվելով առաջ՝ Նոր Շնչով»:

ԱՄՆ–Ն ԵՎ ԻՐԱՆԸ ԿՐԿԻՆ ՓՈԽԱՆԱԿՎԵԼ ԵՆ ՀԱՐՎԱԾՆԵՐՈՎ

Միացյալ Նահանգների եւ Իրանի զինված ուժերը փոխանակվել են հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի նոր հարվածներով: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Reuters-ը, հուլիսի 12-ին Թեհրանը թիրախավորել է Պարսից ծոցի մի շարք պետություններում տեղակայված ամերիկյան օբյեկտները եւ հայտարարել, որ կրկին փակել է ռազմավարական նշանակություն ունեցող Հորմուզի նեղուցը:

Մասնավորապես, իրանական կողմը հարվածներ է հասցրել Քուվեյթի, Բահրեյնի, Հորդանանի, Օմանի ու անգամ ԱՄՆ-ի հետ բանակցություններում միջնորդի դեր կատարող Կատարի տարածքում ամերիկյան ենթակառուցվածքներին: Կատարի իշխանությունները հայտնել են, որ ոչնչացված հրթիռների բեկորներից երեք մարդ է վիրավորվել:

ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM) հայտնել է, որ հուլիսի 12-ին ԱՄՆ զինված ուժերը սկսել են նոր հարվածներ հասցնել Իրանին՝ «շարունակելու թուլացնել քաղաքացիական նավաստիների եւ Հորմուզի նեղուցով ազատորեն անցնող առեւտրային նավերի վրա նրա հարձակվելու կարողությունը»: X-ում արված գրառման մեջ հրամանատարությունից հայտնել են, որ «առաջին անգամ օգտագործել են հարվածային ծովային անօդաչու սարքեր»:

ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության խոսնակ Թիմ Հոքինսը CNN-ին հայտնել է, որ ամերիկյան օդուժը խոցել է իրանական թեւավոր հրթիռ եւ անօդաչու թռչող սարք:

Reuters-ին տված կարճ հեռախոսազրույցում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, անդրադառնալով հանգստյան օրերին Իրանի դեմ իրականացված հարվածներին, ասել է. «Մենք նրանց ծանր հարվածներ ենք հասցնում»:

Իրանական լրատվամիջոցները կիրակի հայտնել են, որ հրթիռային հարվածներ եւ պայթյուններ են գրանցվել Սիրիք եւ Բանդար Աբբաս նավահանգստային քաղաքների, ինչպես նաեւ մոտակայքում գտնվող Քեշմ կղզու շրջանում: Պետական IRNA լրատվականի փոխանցմամբ՝ ամերիկյան հարվածների հետեւանքով երկրի հարավ-արեւմտյան Խուզեսթան նահանգում մեկ մարդ մահացել է:

Իրանի ԱԳՆ-ն դատապարտել է ԱՄՆ-ի՝ հանգստյան օրերին իրականացրած «ագրեսիվ» հարձակումները:

Անցած շաբաթ Թրամփը հայտարարել էր, որ Իրանի հրադադարը համարում է ավարտված՝ չբացառելով հետագա բանակցությունների հնարավորությունը:

Իրանի գլխավոր բանակցող Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը կիրակի X սոցիալական հարթակում գրել է. «Միակողմանի գործարքների ժամանակաշրջանն ավարտված է: Մենք ձեզ ասել էինք՝ կամ պահեք ձեր խոսքը, կամ վճարեք դրա գինը: Իրականությունը թակում է ձեր դուռը»:

ՈՒՆԵՑՎԱԾՔ

ԱՃՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տաթեւիկ Սարգսյանի վերջին երկու տարվա հայտարարագրերը վկայում են, որ պաշտոնավարման ընթացքում նրա ֆինանսական ցուցանիշներն աճել են: Թեեւ անշարժ եւ շարժական գույքի ցանկում փոփոխություններ չեն արձանագրվել, զգալիորեն ավելացել են ինչպես եկամուտները, այնպես էլ դրամական միջոցները:

Տաթեւիկ Սարգսյանը նախարարի տեղակալի պաշտոնը զբաղեցնում է 2024 թվականի ապրիլի 1-ից: Մինչ այդ աշխատել է գյուղատնտեսության եւ էկոնոմիկայի նախարարությունների համակարգում, դասավանդել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում եւ ղեկավարել նախարարության անասնաբուծության ոլորտի պատասխանատու ստորաբաժանումներից մեկը: 2022 թվականից նա նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Գույքը նույնն է, գումարները՝ ավելի շատ

2024 եւ 2025 թվականների հայտարարագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ փոխնախարարը շարունակում է համատեղ սեփականությամբ ունենալ Արագածոտնի մարզի Թալին համայնքում գտնվող երեք անշարժ գույք՝ բնակելի տուն, հողամաս եւ բազմամյա տնկի, որոնք ժառանգությամբ ստացել է դեռեւս 2003 թվականին:

Տրանսպորտային միջոցների ցանկը նույնպես չի փոխվել. նա շարունակում է հայտարարագրել 2011 թվականի արտադրության HYUNDAI մակնիշի ավտոմեքենան, որը գնել է 2021 թվականին:

Սակայն նույնը չի կարելի ասել դրամական միջոցների մասին: 2024 թվականի ընթացքում բանկային հաշիվներում պահվող գումարը 650 հազար դրամից աճել է մինչեւ 1.35 միլիոն դրամ, իսկ կանխիկ միջոցները՝ 2 միլիոնից հասել 3.3 միլիոն դրամի:

2025 թվականին աճը շարունակվել է: Տարվա վերջում նրա բանկային հաշիվներում արդեն առկա է եղել շուրջ 3.57 միլիոն դրամ, իսկ կանխիկ գումարը հասել է 4.7 միլիոն դրամի:

Եկամուտներն աճել են գրեթե 40 տոկոսով

Եթե 2024 թվականին Տաթեւիկ Սարգսյանի հայտարարագրված տարեկան եկամուտը կազմել է 13.68 միլիոն դրամ, ապա մեկ տարի անց այն արդեն հասել է 19.15 միլիոն դրամի՝ աճելով շուրջ 5.5 միլիոն դրամով:

Եկամուտների հիմնական աղբյուրը շարունակում է մնալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որտեղից 2025 թվականին նա ստացել է ավելի քան 18.1 միլիոն դրամ աշխատավարձ: Բացի այդ, նա եկամուտ է ստացել նաեւ Հայաստանի ազգային ագրարային համալսարանից եւ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման եւ վերլուծության գիտական կենտրոն»-ից:

Վարկային բեռը նույնպես պահպանվում է

Հայտարարագրերից երեւում է, որ ֆինանսական ակտիվների աճին զուգահեռ պահպանվել են նաեւ վարկային պարտավորությունները:

2024 թվականի ավարտին փոխնախարարը հայտարարագրել էր միաժամանակ մի քանի փոխառություններ եւ վարկեր, որոնց ընդհանուր մնացորդը գերազանցում էր 4.5 միլիոն դրամը: Իսկ արդեն 2025 թվականի վերջի դրությամբ հայտարարագրում առկա է 4.98 միլիոն դրամ վարկի մայր գումարի մնացորդ:

Ինչ է ցույց տալիս հայտարարագրերի համեմատությունը

Երկու տարվա հայտարարագրերը փաստում են, որ պաշտոնավարման ընթացքում Տաթեւիկ Սարգսյանի գույքային կազմը մնացել է անփոփոխ, սակայն նրա ֆինանսական կարողությունները նկատելիորեն աճել են: Կանխիկ միջոցներն ավելի քան կրկնապատկվել են՝ 2 միլիոն դրամից հասնելով 4.7 միլիոնի, բանկային հաշիվներում կուտակումներն աճել են, իսկ տարեկան եկամուտը մեկ տարվա ընթացքում ավելացել է շուրջ 40 տոկոսով:

Հայտարարագրերը նաեւ ցույց են տալիս, որ աճող եկամուտներին զուգահեռ փոխնախարարը շարունակում է ունենալ վարկային պարտավորություններ, որոնք 2025 թվականի վերջի դրությամբ կազմել են գրեթե 5 միլիոն դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՀԱՋՈՂՎԵԼ Է

Առանց հարեւանների հետ հարաբերություններ կառուցելու՝ անհնար է դառնալ տարանցիկ երկիր: Ադրբեջանին հաջողվել է հարաբերություններ հաստատել հարեւան երկրների հետ եւ կառուցել լայն միջազգային համագործակցություն Արեւելք-Արեւմուտք եւ Հյուսիս-Հարավ ուղղություններով:

Ըստ APA-ի՝ նախագահ Իլհամ Ալիեւն այս հայտարարությունն արել է Շուշայի 4-րդ գլոբալ մեդիա ալիֆորումի բացման ժամանակ:

Ադրբեջանի նաեւ նշել է, որ Ադրբեջանի տարածքով Ռուսաստանից եւ Ղազախստանից Հայաստան է տեղափոխվել ավելի քան 40 հազար տոննա տարբեր բեռներ: Բացի այդ, Ադրբեջանն ինքն է սկսել նավթամթերք մատակարարել Հայաստան:

Նրա խոսքով՝ հանձին Ադրբեջանի՝ Հայաստանը ստացել է մատակարարումների հուսալի աղբյուր. «Եթե նման հնարավորություն չլիներ, Երեւանը ստիպված կլիներ անհրաժեշտ ռեսուրսները փնտրել ամբողջ աշխարհում»:

Անդրադառնալով 907-րդ ուղղմանը՝ Ալիեւը հայտարարել է, որ այն հնացած է եւ պետք է չեղարկվի: Նա հիշեցրել է, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մեկ տարով կասեցրել է դրա գործողությունը, սակայն քաղաքական իմաստով այն դեռեւս պահպանվում է:

Ադրբեջանի նախագահն ընդգծել է, որ որքան շուտ ԱՄՆ Կոնգրեսը լիովին չեղարկի ուղղումը, այնքան ավելի օգտակար կլինի բոլոր կողմերի համար: Նա հույս է հայտնել, որ նման որոշում կկայացվի: Միեւնույն ժամանակ, Ալիեւը նշել է, որ ամերիկյան ներկայիս վարչակազմի օրոք ուղղումը փաստացիորեն ոչ մի դեր չի խաղում:

ԱՌՆՎԱԶՆ 13 ՔԱՂԱՔ Է ՏՈՒԺԵԼ

NourNews-ը հաղորդել է, որ ԱՄՆ զինված ուժերը Իսլամական Հանրապետության դեմ նոր ավիահարվածների շրջանակներում հարվածել են առնվազն 13 իրանական քաղաքների:

Ըստ գործակալության՝ թիրախային քաղաքների թվում են Աբադանը, Ահվազը, Բանդար Աբբասը, Բանդար Մահշահրը, Բեհբահանը, Բուշեհրը, Ջասկը, Դեզֆուլը, Քեշմը, Սիրիկը, Խոնդաբը, Խորամշահրը եւ Էնդիմեշկը:

Ավիահարվածների հետեւանքով զոհերի մասին տեղեկություններ չեն եղել:

Ավելի վաղ ԱՄՆ կենտրոնական հրամանատարությունը հայտարարել էր, որ ամերիկյան զինված ուժերը սկսել են հարվածների նոր ալիք Իրանում գտնվող թիրախների դեմ:

ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2026 թվականի մայիսի, հունիսի եւ հուլիսի հրամաններով՝ դատախազությունում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ: Այս մասին հայտնում են դատախազությունից:

Մասնավորապես՝ Նարեկ Մովսիսյանը նշանակվել է Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության պետի տեղակալի պաշտոնից:

Ծովակ Մնացականյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության ավագ դատախազի պաշտոնից:

Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Արմեն Շահբազյանը փոխադրվել է Գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին:

Գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Վահան Սարգսյանն ազատվել է պաշտոնից:

Արթուր Դանիելյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության դատախազի պաշտոնից:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ Սարգիս Սարգսյանը փոխադրվել է Գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի պաշտոնին:

Նաիրա Արտաշեսյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության դատախազի պաշտոնից:

Ֆիլիանա Բելլույանը նշանակվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության դատախազի պաշտոնից:

Էվելինա Սարգսյանը նշանակվել է Երեւան քաղաքի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով Երեւան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնից:

Սպարտակ Մնացականյանը նշանակվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանի ավագ դատախազի պաշտոնից:

Հայկ Ժամակոչյանը նշանակվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանի դատախազի պաշտոնից:

Արմեն Գրիգորյանը նշանակվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնից:

Արսեն Ավետիսյանը նշանակվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնից:

Տավուշի մարզի դատախազության դատախազ Գայանե Մանուկյանը փոխադրվել է Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնին:

Հրաչյա Մարգարյանը նշանակվել է Լոռու մարզի դատախազի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով Լոռու մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնից:

Արտուշ Կարապետյանը նշանակվել է Լոռու մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Էլեն Անանյանը փոխադրվել է Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին:

Կարապետ Սմբատյանը նշանակվել է Արարատի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով Արարատի մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Լոռու մարզի դատախազության դատախազ Դավիթ Գրիգորյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Վահագն Վարդանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Անի Հովհաննիսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արարատի մարզի դատախազության դատախազ Ահարոն Սաֆարյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Նարինե Չիչակյանը նշանակվել է Տավուշի մարզի դատախազության դատախազի պաշտոնին:

Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ Նորայր Շահինյանը փոխադրվել է Արարատի մարզի դատախազության դատախազի պաշտոնին:

Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Վազգեն Մկրտչյանը փոխադրվել է Արարատի մարզի դատախազության դատախազի պաշտոնին:

Դավիթ Նավասարդյանը նշանակվել է Զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարեւոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի պետի պաշտոնին՝ ազատվելով նույն բաժնի ավագ դատախազի պաշտոնից:

Վազգեն Վարդանյանը նշանակվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պաշտոնին՝ ազատելով նույն բաժնի ավագ դատախազի պաշտոնից:

Կապանի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Գարեգին Իսախանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Կապանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ Վահե Եզեկյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

ԿԱՆԵՓ ԱՃԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Համայնքային ոստիկանության Սպիտակի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Արեւաշող գյուղի մի բնակիչ ապօրինի պահում է թմրանյութ եւ աճեցնում կանեփ: Տեղեկությունը ստուգվել ու հաստատվել է, եւ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հուլիսի 7-ին կատարված զննությամբ 33-ամյա տղամարդու բնակության վայրում հայտնաբերվել է կանեփի 215 թուփ: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Սպիտակի քննչական բաժին:

Նույն օրը նման մի տեղեկություն էլ ստացել էին Քրեական ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանները: Հետագա միջոցառումների արդյունքում Աշոտավան բանավանի բնակիչ 61-ամյա տղամարդը հայտնել է, որ այգում կանեփ է աճեցնում: Քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ տղամարդու տնամերձ հողամասում հայտնաբերվել է կանեփի 10 թուփ:

Համայնքային ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողների օպերատիվ տեղեկության համաձայն՝ Լուսահովիտ գյուղի մի բնակիչ էլ կանեփ էր աճեցրել իր հողամասում: Տավուշի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հուլիսի 8-ին կատարված զննությամբ հայտնաբերվել է մշակված կանեփի վեց թուփ: Հիշեցնենք, որ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը քրեորեն պատժելի արարք է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀՆՉԵԼ ԵՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Հուլիսի 12-ին կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 19:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արաբկիրի բաժնում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչությունում միաժամանակ օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վաղարշյան փողոցի 24/6 շենքի բակային հատվածում միջադեպ է տեղի ունեցել, որի ժամանակ հնչել են կրակոցներ եւ կան վիրավորներ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել են Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների 2 հերթապահ խումբ, ովքեր ըստ դեպքի վայրում հավաքվածների 2 հոգի բուժօգնություն են ցուցաբերել, ապա տեղափոխել Երեւանի տարբեր մասնագիտացված հիվանդանոցներ:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչության ծառայողները՝ վարչության պետ Հայկ Հարությունյանի եւ ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Ռուբեն Ներսիսյանի գլխավորությամբ:

Դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված պարկուճներ, գնդակ, վնասված ավտոմեքենաներ, մեկ այլ ավտոմեքենայի վրա էլ առկա է կրակոցի հետք, իսկ մեկ այլ ավտոմքենայի վրա՝ արնանման հետքեր, հայտնաբերվել է նաեւ կացինի պոչ, որի վրա նույնպես կա արնանման հետքեր, գլխարկներ, հողաթափեր, որոնց վրա նույնպես առկա են արնանման հետքեր:

Դեպքի մասին ոստիկանության Արաբկիրի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Ազատ Դանիելյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

ԱՊՕՐԻՆԻ ՊԱՀՎՈՂ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Համայնքային ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Նավուր գյուղի բնակիչ 39-ամյա մի տղամարդ կրում եւ տանը պահում է ապօրինի զենք-զինամթերք:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հուլիսի 8-ին՝ ժամը 13:30-ին, նա ձերբակալվել ու տեղափոխվել է բաժին:

Բերդի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Տան զննությամբ հայտնաբերվել է հրացան, մարտական 25 փամփուշտ, մեկ տուփ վառոդ եւ այլ զինամթերք:

Հանգամանքները պարզվում են:

● *Հանրապետությունում հուլիսի 10-ից 13-ը բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 3 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՄԻԱՅՆ 2-ԻՆԸ

Ամիսներ շարունակ Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում համայնքապետարանի աշխատակազմի բաժինը փակ էր: Նախկինում այնտեղ ներկայացված էին համայնքապետարանի աշխատողները՝ զբաղեցրած պաշտոններով, լուսանկարներով, կոնտակտային տվյալներով: Հիմա կայքում հայտնվել են համայնքապետարանի աշխատակազմից 2-ի տվյալները՝ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Հայկ Մնացականյանի եւ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Անետա Գուլինյանի: Դիլիջան համայնքը մեծ բյուջե ունի համայնքապետարանի կայքը աշխատանքային վիճակում պահելու համար, սակայն համայնքապետարանի աշխատակազմի տվյալները մոտ 5 ամիս անհասանելի են:

ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է

Իջեւան-Նոյեմբերյան ավտոճանապարհին այլընտրանք է Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ավտոճանապարհը, որի 6,3 կիլոմետր հատվածը կառուցվել է 2024թ., ճանապարհի մնացած, մեծ հատվածը պետք է կառուցապատվի: Հունիսի 22-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին. «Ենոքավան-Կարմիրգյուղ ճանապարհի ընդամենը 6,3 կմ-ն է կառուցվել 2024 թվականին: Այդ ճանապարհի մնացած հատվածի չափագրման, նախագծման, նախահաշվի կազմման աշխատանքները ե՞րբ են սկսվել, ինչքա՞ն ժամանակ կտեւեն: Ե՞րբ է այդ ճանապարհի մնացած հատվածի շինարարության մրցութ հայտարարվելու, ինչքա՞ն գումար է նախատեսված դրա շինարարության համար»: Հունիսի 29-ին ստացել եմ ՏԿԵ նախարարի տեղակալ Ավետիք Դարբինյանի ստորագրությամբ պատասխան. «Հայտնում ենք, որ Հ26, /Մ4/-Ենոքավան-Կարմիրգյուղ(գյուղատեղի)-/Մ16/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+300-կմ 71+800 հատվածի հիմնանորոգման նախագիծը պատրաստ է:Շինարարության մրցույթը կայացել է: Մոտ 67 կմ ավտոճանապահի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են: Շինաշխատանքերի պայմանագրային արժեքը 14 670 000 000 դրամ է»:

GPS-Ը ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ

Տավուշի մարզի սահմանագոտու շատ հատվածներ տեղորոշման GPS համակարգը ցույց է տալիս իբրեւ Ադրբեջանի տարածք: Իջեւան համայնքի Ազատամուտ բնակավայրի վարչական ղեկավար Արտակ Չոբանյանին հարցրի՝ տեղյա՞կ է այդ մասին: Նա ասաց, որ GPS-ը առաջնորդվում է Googl-ի քարտեզներով, որոնք պաշտոնական չեն, հավաստի չեն: Ա. Չոբանյանը հայտնեց, որ Ազատամուտում տարածքներ կան, որտեղ պետական աջակցությամբ, վարկային միջոցներով, 16 միլիոն դրամ արժեքով ազատամուտցիները առանձնատներ են կառուցել, GPS համակարգը դրանք ցույց է տալիս որպես Ադրբեջանի տարածք, սակայն դա Ազատամուտ գյուղի տարածքն է.

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՐԱՄԱԴՐԵԼ Է Գ

«ՄՈԴԻՖԻԿԱՑՎԱԾ ՌԻՍԿՈՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ» ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

FDA-ի որոշմամբ ZYN-ը դարձավ առաջին նիկոտինային բարձիկները, որի համար տրվել է «մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանքի» (MRTP) թույլտվություն, ինչը թույլ է տալիս ներկայացնել գիտականորեն հիմնավորված պնդումներ, որ այն, ի համեմատ սիգարետի, նվազեցնում է առողջական ռիսկերը:

Օրերս ԱՄՆ Սննդամթերքի եւ դեղորայքի վերահսկողության վարչությունը (FDA) հայտարարեց, որ «Մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանքի» (Modified Risk Tobacco Product, MRTP) թույլտվություն է տրամադրել ZYN նիկոտինային բարձիկների 20 տարբերակների համար: Սրանք նիկոտինային բարձիկների համար տրված առաջին MRTP թույլտվություններն են, որոնք ՖՄԻ-ի ԱՄՆ ստորաբաժանմանը հնարավորություն են տալիս հաստատված ZYN արտադրանքի վերաբերյալ կիրառել հետեւյալ պնդումը. «Ծխախոտի փոխարեն ZYN-ի օգտագործումը նվազեցնում է բերանի խոռոչի քաղցկեղի, սրտային հիվանդությունների, թոքերի քաղցկեղի, ինսուլտի, էմֆիզեմայի եւ քրոնիկ բրոնխիտի զարգացման ռիսկը»:

ԱՄՆ-ում նիկոտին պարունակող արտադրանքները մինչեւ շուկա դուրս գալը ենթարկվում են FDA-ի մանրակրկիտ գիտական գնահատման:

FDA-ն հաստատել է ZYN-ի վերաբերյալ MRTP պնդման կիրառումը, որն ուժի մեջ է մտնում անմիջապես:

FDA-ի կողմից տրամադրված թույլտվության մեջ նշվում է. «Ձեր (PMI) MRTPA դիմումների ուսումնասիրության արդյունքում մենք եզրակացրել ենք, որ առաջարկվող մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանքները, ինչպես նկարագրված են ձեր դիմումներում եւ նշված են Հավելված A-ում, համապատասխանում են 911(g)(1)(A) եւ (B) բաժինների պահանջներին: Մասնավորապես, դրանք, սպառողների կողմից փաստացի օգտագործման պայմաններում, զգալիորեն կնվազեցնեն վնասը եւ ծխախոտի օգտագործման հետ կապված հիվանդությունների ռիսկը ծխողների համար, ինչպես նաեւ կբարելավեն բնակչության առողջությունն ընդհանուր առմամբ՝հաշվի առնելով ինչպես ծխողներին, այնպես էլ այն անձանց, որոնք ներկայումս չեն օգտագործում ծխախոտային արտադրանք: Հետեւաբար, մենք թույլատրում ենք այս ծխախոտային արտադրանքների շուկայավարումը որպես մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանք՝ հետեւյալ պնդմամբ. «Սիգարետի փոխարեն ZYN-ի օգտագործումը նվազեցնում է բերանի խոռոչի քաղցկեղի, սրտային հիվանդությունների, թոքերի քաղցկեղի, ինսուլտի, էմֆիզեմայի եւ քրոնիկ բրոնխիտի զարգացման ռիսկը»:

Նիկոտինային բարձիկները նիկոտինը փոխանցում են բերանի խոռոչի լորձաթաղանթի միջոցով եւ չեն պահանջում ծխախոտի այրում կամ ծխի ներշնչում: Արդյունքում, այրվող ծխախոտային արտադրանքների, օրինակ՝ սիգարետի, համեմատ զգալիորեն նվազում է վնասակար եւ պոտենցիալ վնասակար քիմիական նյութերի ազդեցությունը:

2025 թվականի հունվարին ZYN-ին նախաշուկայական ծխախոտային արտադրանքի հայտի (PMTA) ընթացակարգով վաճառքի թույլտվություն տրամադրելիս FDA-ն նշել էր. «Գործակալության գնահատումը ցույց է տվել, որ սիգարետի եւ առանց այրում այլ արտադրանքների մեծ մասի համեմատ զգալիորեն ավելի քիչ վնասակար բաղադրիչների շնորհիվ, թույլատրված արտադրանքները (ZYN) քաղցկեղի եւ այլ լուրջ առողջական խնդիրների ավելի ցածր ռիսկ են ներկայացնում: Հայտատուն նաեւ ներկայացրել է ուսումնասիրության արդյունքներ, որոնք ցույց են տալիս, որ սիգարետ եւ/կամ ծխախոտ չայրող արտադրանք օգտագործող չափահասների զգալի մասը լիովին անցել է նոր թույլատրված նիկոտինային բարձիկների օգտագործմանը»:

Ֆիլիպ Մորրիս Ինթերնեյշնլ. գլոբալ առաջատար դեպի անծուխ ապագա

Ֆիլիպ Մորրիս Ինթերնեյշնլն սպառողական ապրանքներ արտադրող առաջատար միջազգային ընկերություն է, որն ակտիվորեն աշխատում է անծուխ ապագա կառուցելու ուղղությամբ եւ երկարաժամկետ զարգացնում իր պորտֆելը՝ ներառելով նաեւ ծխախոտի եւ նիկոտինի ոլորտից դուրս արտադրանքներ:

Ընկերության ներկայիս պորտֆելը հիմնականում ներառում է սիգարետ եւ անծուխ արտադրանքներ՝այդ թվում ծխախոտը տաքացնող, բայց այրում չառաջացնող սարքեր, նիկոտինային բարձիկներ եւ վեյփեր: ՖՄԻ-ի անծուխ արտադրանքը վաճառվում է ավելի քան 105 շուկաներում, եւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ ՖՄԻ-ի գնահատականների, դրանք օգտագործում են ավելի քան 43 միլիոն չափահաս սպառողներ ամբողջ աշխարհում, որոնցից շատերը ամբողջությամբ հրաժարվել են սիգարետներից կամ զգալիորեն նվազեցրել դրանց օգտագործումը:

2026 թվականի առաջին կեսին PMI-ի ընդհանուր մաքուր եկամուտների 43%-ը կազմել է անծուխ բիզնեսը: 2008 թվականից ի վեր ՖՄԻ-ն ավելի քան 16 միլիարդ դոլար է ներդրել նորարարական անծուխ արտադրանքների մշակման, գիտական հիմնավորման եւ առեւտրայնացման համար՝ նախատեսված չափահասների համար, որոնք հակառակ դեպքում կշարունակեին ծխել: Այս ներդրումները ներառում են նաեւ համաշխարհային մակարդակի գիտական գնահատման կարողությունների զարգացում՝ նախակլինիկական համակարգային տոքսիկոլոգիայի, կլինիկական եւ վարքագծային հետազոտությունների, ինչպես նաեւ հետշուկայական ուսումնասիրությունների ոլորտներում:

Գիտական մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո ԱՄՆ Սննդամթերքի եւ դեղորայքի վերահսկողության վարչությունը (FDA) թույլատրել է Swedish Match-ի General snus-ի եւ ZYN նիկոտինային բարձիկների, ինչպես նաեւ ՖՄԻ-ի ծխախոտի տաքացման սարքերի եւ դրանց սպառողական ապրանքների որոշ տարբերակների շուկայավարումը՝ իրենց կատեգորիաներում առաջին նման թույլտվություններով: IQOS սարքերի որոշ տարբերակներ, General snus-ը ZYN-ը FDA-ի կողմից ստացել են նաեւ «Մոդիֆիկացված ռիսկով ծխախոտային արտադրանք» թույլտվությունները:

Կենսական գիտությունների ոլորտում ամուր հիմքի եւ փորձի շնորհիվ ՖՄԻ-ն ունի նաեւ երկարաժամկետ նպատակ ընդլայնվելու առողջության եւ բարեկեցության ոլորտներում:

«ՖՄԻ», «մենք», «մեր» եւ «մեզ» ձեւակերպումները վերաբերում են Philip Morris International Inc.-ին եւ նրա դուստր ընկերություններին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.pmi.com եւ www.pmiscience.com:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՄԱՆԴԱՏԻՑ

Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը հայտնում է. «Տեղեկացնում եմ, որ հրաժարվել եմ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի մանդատից եւ շարունակելու եմ իմ գործունեությունը՝ որպես Շիրակի մարզպետ: Ինձ համար պետական ծառայությունը պատասխանատվություն է մարդկանց հանդեպ:

Այդ պատասխանատվությամբ էլ շարունակելու եմ առավել մեծ հաստատակամությամբ, հետեւողականությամբ եւ վճռականությամբ աշխատել՝ հանուն Շիրակի զարգացման, նոր ծրագրերի իրականացման, ենթակառուցվածքների բարելավման եւ մեր մարզի ու սիրելի Գյումրու առաջընթացի: Շնորհակալ եմ Շիրակի մարզի բոլոր բնակիչներին աջակցության եւ համագործակցության համար: Ձեր վստահությունն ինձ համար ամենամեծ պատասխանատվությունն է, ամենօրյա աշխատանքով ու գործուն քայլերով անելու եմ հնարավորը՝ արդարացնելու ձեր սպասումները:

Վստահ եմ, որ միասին կկարողանանք իրականացնել մեր առջեւ դրված նպատակները եւ ապահովել Շիրակի ու Գյումրու կայուն զարգացումն ու բարեկեցիկ ապագան: Անշեղ հանձնառությամբ, նվիրումով ու եռանդով քայլելու ենք առաջ՝ հանուն Շիրակի մարզի, նրա համայնքների, յուրաքանչյուր բնակչի եւ Հայաստանի Հանրապետության»:

● *Անցած 3 օրում գրանցվել է 50 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 74-ը ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

TELCELL

ՀԻՆԳ ԽՆԴԻՐ, ՏԱՍԸ ԼՈՒԾՈՒՄ

Վճարումները՝ ավելի արագ, ավելի պարզ եւ առանց ավելորդ քայլերի: TelCell-ը ներկայացրել է My Telcell նոր հարթակը, որը Telcell Wallet-ի նույնականացված օգտատերերին հնարավորություն է տալիս անմիջապես Telcell վճարային տերմինալից մուտք գործել իրենց անձնական էջ եւ օգտվել հաճախ օգտագործվող ծառայություններից:

Նոր լուծման առանձնահատկությունն այն է, որ Հայաստանում առաջին անգամ տերմինալով նույնականացումը հնարավոր է իրականացնել առանց էկրանին դիպչելու: Բավական է Apple Pay կամ Google Pay-ում ավելացված Telcell Wallet Visa Digital քարտով հեռախոսը մոտեցնել քարտ ընթերցիչին, եւ համակարգը ավտոմատ կճանաչի օգտատիրոջը՝ բացելով նրա անձնական էջը: Իսկ նրանք, ովքեր դեռ չունեն թվային քարտ, կարող են մուտք գործել QR կոդի կամ push ծանուցման հաստատման միջոցով:

TelCell-ի փոխտնօրեն Լիանա Հունանյանի խոսքով՝ ընկերությունը երկար տարիների ընթացքում առանձնացրել է հինգ հիմնական խնդիր, որոնց հաճախ բախվում էին օգտատերերը՝ նույնականացման բարդ ընթացակարգը, քարտային տվյալների հիշելու անհրաժեշտությունը, մանրի հետ կապված դժվարությունները, վճարումների կարգավիճակի անորոշությունը եւ հաճախորդների աջակցության հասանելիությունը: Հենց այդ խնդիրների լուծման համար էլ մշակվել են նոր գործիքները:

My Telcell հարթակը թույլ է տալիս առանց կրկին նույնականանալու համալրել Telcell Wallet-ը, բանկային քարտերը եւ հաշիվները, մարել վարկերը, ստեղծել եւ կառավարել պահպանված վճարումները, կատարել խմբային վճարումներ, դիտել գործարքների պատմությունը եւ մեկ հպումով կրկնել նախկինում կատարված վճարումները:

Նորարարություններից մեկն էլ Telcell Wallet հավելվածում ներդրված չաթն է՝ բոտի աջակցությամբ: Այսուհետ օգտատերերը կարող են հավելվածի միջոցով տեղեկանալ իրենց վճարումների կարգավիճակին, ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը եւ միայն բարդ դեպքերում դիմել թեժ գծին: Ընկերությունում վստահ են, որ այս լուծումը կթեթեւացնի աջակցության ծառայության ծանրաբեռնվածությունը եւ կբարելավի հաճախորդների սպասարկման որակը:

TelCell-ում ընդգծում են՝ My Telcell հարթակը թվային ֆինանսական ծառայությունների զարգացման հերթական քայլն է, որի նպատակը վճարումները դարձնելն է առավել արագ, անվտանգ եւ հարմար՝ միավորելով բջջային հավելվածի եւ վճարային տերմինալների հնարավորությունները մեկ միասնական հարթակում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԶՐՈՒՅՑ

ՌԱՔՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Արագ փոփոխվող տնտեսական միջավայրը բանկերից պահանջում է ոչ միայն ճկունություն, այլեւ ռազմավարական մոտեցումներ: Ֆինանսական կառավարման դերը վաղուց դուրս է եկել սոսկ թվային ցուցանիշներ արձանագրելու շրջանակից՝ դառնալով կայունության եւ աճի գլխավոր շարժիչ ուժը:

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրենի՝ ֆինանսական գծով տեղակալ Ռուբեն Բադալյանը խոսել է ֆինանսական ռիսկերի զսպման արդյունավետ մեխանիզմների, ներքին գործընթացների ավտոմատացման ու թվայնացման ազդեցության, ինչպես նաեւ շուկայում երկարամյա վստահության ամրապնդման եւ հանրության ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված բանկի առաքելության մասին:

- Պարոն Բադալյան, այսօր համաշխարհային ֆինանսական շուկաները շարունակում են գործել բավական փոփոխական եւ անկայուն միջավայրում: Ինչպե՞ս է Հայէկոնոմբանկին հաջողվում տնտեսական անորոշությունների պայմաններում պահպանել կայունությունը, եւ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ֆինանսական ռիսկերի զսպման ուղղությամբ:

- Վերջին տարիներին ֆինանսական շուկաներն իսկապես աչքի են ընկնում բարձր տատանողականությամբ: Աշխարհաքաղաքական զարգացումները եւ տնտեսական մարտահրավերները բանկերից պահանջում են ճկունություն, արագ արձագանքման եւ, միաժամանակ, երկարաժամկետ պլանավորման կարողություն:

Մեր առաջնահերթությունը ֆինանսական կայունության, իրացվելիության բարձր մակարդակի եւ հաճախորդների վստահության պահպանումն է: Այդ նպատակով մենք մշտապես վերահսկում ենք ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքը, պահպանում ենք իրացվելիության բավարար պաշարներ եւ առանձնակի ուշադրությամբ հետեւում տոկոսադրույքի, արժութային եւ իրացվելիության ռիսկերին:

Միաժամանակ, մենք պարբերաբար իրականացնում ենք սթրես-թեստավորումներ եւ տարբեր սցենարային վերլուծություններ, ինչը թույլ է տալիս հնարավոր մարտահրավերներին պատրաստ լինել նախապես: Մեծ ուշադրություն ենք դարձնում նաեւ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացմանը, ավանդային բազայի կայունությանը եւ կապիտալի բավարար մակարդակի պահպանմանը:

Ֆինանսական կայունությունը պատահական արդյունք չէ. այն ամենօրյա կարգապահ աշխատանքի, պատասխանատու ռիսկերի կառավարման եւ ռազմավարական մտածողության արդյունք է:

- Ժամանակակից բանկն այլեւս հնարավոր չէ պատկերացնել առանց տեխնոլոգիական լուծումների: Ի՞նչ ազդեցություն է ունենում թվայնացումը Ձեր ամենօրյա աշխատանքի վրա, եւ արդյո՞ք այդ փոփոխություններն ուղղակիորեն զգում է հաճախորդը:

- Այսօր արդեն դժվար է պատկերացնել արդյունավետ ֆինանսական կառավարում առանց թվայնացման: Եթե տարիներ առաջ բազմաթիվ գործառույթներ կատարվում էին աշխատակիցների կողմից առանձին ծրագրերի միջոցով, ապա այժմ ավտոմատացված համակարգերը հնարավորություն են տալիս դրանք իրականացնել զգալիորեն ավելի արագ եւ ճշգրիտ՝ նվազեցնելով գործառնական ռիսկերն ու բարձրացնելով հաշվետվությունների որակը: Արդյունքում մեր թիմը կարողանում է ավելի շատ ժամանակ հատկացնել խորքային վերլուծություններին, ֆինանսական պլանավորմանն ու ռազմավարական որոշումների կայացմանը:

Այս ամենն անմիջական ազդեցություն ունի նաեւ հաճախորդի վրա: Երբ ներքին գործընթացներն ավելի արդյունավետ են, բանկը կարողանում է ճկուն կառավարել իր ծախսերը, արագացնել ծառայությունների մատուցումը եւ հաճախորդներին առաջարկել ավելի մրցունակ պայմաններ:

Թվայնացման հիմնական նպատակը միայն ծախսերի կրճատումը չէ. այն առաջին հերթին բարձրացնում է սպասարկման արագությունը, անվտանգությունն ու հարմարավետությունը:

- Գաղտնիք չէ, որ բանկային ավանդների շուկան բավականին մրցակցային է: Ի՞նչն է, ըստ Ձեզ, այսօր ձեւավորում հաճախորդների վստահությունը, եւ ֆինանսական ի՞նչ գործիքակազմով է Հայէկոնոմբանկն ապահովում հաճախորդների հավատարմությունը:

- Մեր փորձը ցույց է տալիս, որ հաճախորդներն իրենց ընտրությունը վաղուց արդեն չեն կատարում միայն տոկոսադրույքի հիման վրա: Ոչ պակաս կարեւոր են բանկի հուսալիությունը, պատմությունը, սպասարկման որակն ու թվային հնարավորությունները:

Մեր նպատակը ոչ թե պարզապես միջոցներ ներգրավելն է, այլ երկարաժամկետ հարաբերություններ կառուցելը, որոնց հիմքում կանխատեսելիությունն է: Դրա համար մենք առաջարկում ենք տարբեր ժամկետայնությամբ եւ տարբեր արժույթներով ավանդներ, թողարկում պարտատոմսեր, վարում շուկային համահունչ տոկոսադրույքային քաղաքականություն եւ շարունակաբար զարգացնում մեր թվային հարթակները, որ յուրաքանչյուր հաճախորդ կարողանա հեշտ եւ հարմար կառավարել իր ֆինանսները:

Վստահությունը ձեւավորվում է ոչ թե մեկ առաջարկով, այլ տարիների հետեւողական աշխատանքով, թափանցիկ գործունեությամբ եւ պատասխանատու վերաբերմունքով:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչ նշանակություն ունի ֆինանսական գրագիտությունը հաճախորդների պատասխանատու վարքագծի ձեւավորման գործում, եւ ինչպե՞ս կարող են բանկերը նպաստել այդ գործընթացին:

- Ֆինանսական գրագիտությունն այսօր արդեն հավելյալ գիտելիք չէ, այլ ֆինանսական կայունության կարեւոր նախապայման: Որքան բարձր է հանրության իրազեկվածությունը ֆինանսական գործիքների, ռիսկերի եւ հնարավորությունների վերաբերյալ, այնքան ավելի հիմնավորված եւ հեռանկարային են նրանց որոշումները՝ լինի դա խնայողությունների կառավարում, ներդրումների իրականացում, թե վարկային պարտավորությունների ստանձնում:

Տեղեկացված հաճախորդն արդյունավետ է կառավարում ոչ միայն իր բյուջեն, այլեւ նպաստում է ամբողջ ֆինանսական համակարգի առողջ զարգացմանը, եւ բանկերն այստեղ լրջագույն կրթական ու տեղեկատվական առաքելություն ունեն:

- Ֆինանսական գծով փոխտնօրենի դերը ժամանակակից աշխարհում վաղուց դուրս է եկել միայն թվեր արձանագրելու շրջանակից. այն ունի ընդգծված ռազմավարական նշանակություն: Այս համատեքստում, առաջիկա տարիներին զարգացման ի՞նչ գլխավոր նշաձողեր եք սահմանել Ձեր թիմի համար:

- Բանկի ռազմավարական առաջընթացն անհնար է առանց ներքին գործընթացների արդյունավետ կառավարման:

Մենք շարունակում ենք աշխատել գործընթացների ավտոմատացումը խթանելու, տվյալների վերլուծությունն ընդլայնելու, ռիսկերի արդյունավետ զսպման եւ կայունության ապահովման, ինչպես նաեւ ռեսուրսների դիվերսիֆիկացման ուղղությամբ: Սրանք այն ուղղություններն են, որոնք սահմանում են մեր այսօրվա օրակարգը եւ երաշխավորում Բանկի կայուն զարգացումն ապագայում:

Ֆինանսական կայունությունն ու աճը երբեք պատահական չեն. դրանք ամենօրյա կանոնակարգված աշխատանքի եւ պատասխանատու կառավարման արդյունք են: Դա հենց այն հիմքն է, որ ձեւավորում է Հայէկոնոմբանկի նկատմամբ երկարամյա վստահությունն ու ամրապնդում մեր դիրքերը շուկայում՝ որպես կայուն եւ հեռանկարային գործընկեր յուրաքանչյուր հաճախորդի համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ Գ

«ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՄ ԱՊԱԳԱ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Բացահայտել եւ խրախուսել ակտիվ, ճկուն եւ ոլայծառ մտածելակերոլ ունեցող ուսանողներին, որոնք սովորում են ՀՀ պետական կամ մասնավոր բուհերում: Հենց այս նպատակն է հետապնդում Ամերիաբանկի «Իմ Հայաստան, իմ ապագա» ուսանողական մրցույթը, որի հաղթողները հավաքվել էին մեկ հարկի տակ ոչ միայն տոնելու հաղթանակը, այլեւ ծանոթանալու, շփվելու ու հետաքրքիր ելույթներ ունկնդրելու համար:

Մրցույթի արդյունքում 200 ուսանող 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում 4 ամիս շարունակ ստացել է ամսական 50,000 ՀՀ դրամ կրթաթոշակ:

«Մեզ համար կարեւոր է լինել երիտասարդների կողքին, կիսվել մեր փորձով եւ գիտելիքներով, միեւնույն ժամանակ ոգեշնչվել իրենցից: Մենք հավատում ենք, որ երկրի զարգացումը սկսվում է յուրաքանչյուր մարդու զարգացումից, մեր ապագան էլ այս երիտասարդների ձեռքում է»,-ասում է Ամերիաբանկի Մարքեթինգի եւ հաղորդակցության գծով տնօրեն Իրինա Փյուսկյուլյանը:

«Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթը երկրորդ տարին անընդմեջ իրականացվել է «ռեԱրմենիա» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ: Մրցույթին կարող էին մասնակցել ՀՀ գործող պետական կամ ոչ պետական բուհերի ուսանողները, որոնք դիմելու պահին ունեին Ամերիաբանկի Visa Student տեսակի գործող քարտ: Հաղթողներն ընտրվել են երկու չափանիշների համադրմամբ՝ կուտակային միջին որակական գնահատական /ՄՈԳ/ եւ մրցույթի շրջանակում անցկացվող ինտելեկտուալ թեստի արդյունքներ:

«Սա այն եզակի հնարավորություններից էր, որ ես համապատասխանում էի չափանիշներին ու դուրս էլ եկավ, որ ինչ-որ փորձառություն չէր պահանջում, այլ թեստ էինք հանձնելու ու դրա հիման վրա գիտելիքն ու տրամաբանությունը ստուգվելու էր, կրթաթոշակը հատկացվելու՝ անկախ նրանից անվճար համակարգում էինք սովորում, թե վճարովի»,-պատմում է «Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթի հաղթող Տարոն Մկրտումյանը:

«Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթն առաջին անգամ անցկացվել է 2024թ.-ին, կրթաթոշակ է տրամադրվել ՀՀ 15 բուհից 160 ուսանողի: Մինչ օրս «Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթի շրջանակում հաղթող է ճանաչվել եւ կրթաթոշակի արժանացել ՀՀ 18 պետական եւ մասնավոր բուհ ներկայացնող 360 ուսանող: Բացի դրանից, 2024թ. մրցույթի արդյունքներով 10 ուսանող մասնակցել է կարճաժամկետ կրթական ծրագրի ԱՄՆ Բերքլիի համալսարանում, եւս 3-ը ստացել է ֆինանսավորում իրենց ներկայացրած ծրագրերի իրագործման համար:

«Ցանկանում եմ մեծ շնորհակալություն հայտնել Ամերիաբանկին եւ ողջ թիմին՝ այս շատ հրաշալի նախաձեռնության համար: Շատ կարեւոր է, որ կան կազմակերպություններ, որոնք ներդրումներ են անում ոչ միայն տնտեսական եւ բիզնես ոլորտներում, այլեւ կրթության եւ երիտասարդների ներուժի զարգացման համար», նշել է «Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթի հաղթող Աննա Թովմասյանը:

Ամերիաբանկի Մասնաճյուղային ցանցի եւ կոնտակտային կենտրոնի ղեկավար Անդրանիկ Խաչատրյանն էլ իր հերթին կարեւորել է այն հանգամանքը որ Ամերիաբանկը ընկերություն է անում երիտասարդների հետ:

Ամփոփիչ միջոցառմանը ներկա էր ավելի քան 110 ուսանող, այդ թվում՝ նախորդ տարվա մրցույթի հաղթողները, ինչպես նաեւ ՀՀ բուհերի ներկայացուցիչներ: Օրակարգը հագեցած էր՝ ինտերակտիվ պանելային քննարկում, խոսնակների ելույթներ հաջողության պատմությունների վերաբերյալ, խաղեր եւ այլն:

Դերասան Սոս Ջանիբեկյանն էլ նշել է, որ ելույթի ժամանակ անկեղծորեն պատմել է իր կյանքի շրջադարձային պահերի եւ գիտակցական հաջողության բանալիի մասին:

Նշենք, որ Ամերիաբանկն ունի նաեւ հատուկ առաջարկներ ուսանողների համար: Մասնավորապես, Visa Student քարտը տրամադրվում է անվճար՝ 4 տարով առանց սպասարկման վճարի: Visa Student քարտի միջոցով ուսանողների համար ներկա պահին հասանելի են հետեւյալ արտոնությունները՝

Տարեկան 3% դրույքաչափով տոկոսի կուտակում քարտային հաշվի դրական մնացորդին

Զեղչեր մի շարք կրթական եւ ժամանցային միջոցառումների համար, օրինակ՝ 10% զեղչ British Council-ում անգլերենի առցանց դասընթացների համար, 15% զեղչ edX եւ GetSmarter առցանց կրթական հարթակներում դասընթացների համար, ինչպես նաեւ KinoPark-ից օգտվելու համար եւ այլն:

Բացի Visa Student քարտի միջոցով հասանելի առավելություններից, Ամերիաբանկն առաջարկում է նաեւ մինչեւ 2 մլն ՀՀ դրամի չափով ուսանողական վարկ՝ աջակցելու համար ուսանողներին կրթավճարի ծախսերը հոգալու հարցում:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿՎԵԼ ԵՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ Գ

Հուլիսի 8-ին Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX) հնչած ավանդական զանգն ազդարարեց հայրենի կառուցապատման ոլորտի առաջատարներից մեկի՝ «Ռենշին»-ի պատշգամբային մուտքը կապիտալի շուկա: Ընկերության պարտատոմսերը ցուցակվել են բորսայում, ինչը նշանակում է, որ այն թեւակոխել է զարգացման բոլորովին նոր՝ թափանցիկության եւ հաշվետվողականության բարձրագույն փուլ:

«Ռենշինը» հանրությանը հայտնի է՝ որպես Հայաստանի անշարժ գույքի շուկայում շուրջ 25 տարվա պատմություն ունեցող եւ մոտ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում իրականացրած ընկերություն: Հենց այս ընկերությունն է կյանքի կոչում մայրաքաղաքի դեմքը փոխող այնպիսի խոշորագույն ծրագրեր, ինչպիսիք են ArtLife Kempinski Residences Yerevan-ը եւ «Սքայլայն» (Skyline) ինովացիոն թաղամասը: Բացի այդ, ընկերության կողմից է ներկայացվել եւ ՀՀ կառավարության հավանությանն արժանացել «Համաշխարհային առեւտրի կենտրոն (WTC)» կառուցելու մեգածրագիրը:

Վստահությունը վերածվում է կապիտալի

Բորսայի գլխավոր տնօրեն Հայկ Եգանյանի խոսքով՝ իրական հատվածի խոշոր ընկերությունների մուտքը կապիտալի շուկա կարեւոր իրադարձություն է ամբողջ տնտեսության զարգացման համար: Նա ընդգծել է, որ սա ընկերությանը թույլ է տալիս ներգրավել երկարաժամկետ ֆինանսներ՝ միաժամանակ բարձրացնելով ճանաչելիությունն ու թափանցիկությունը ներդրողների շրջանում:

«Ռենշին»-ի ֆինանսական տնօրեն Քրիստինա Չիչյանն իր հերթին նշել է, որ սա իրենց առաջին թողարկումն էր կապիտալի շուկայում, եւ այն ամբողջությամբ տեղաբաշխվել է: Սա խոսում է ընկերության հանդեպ քաղաքացիների ու ներդրողների մեծ վստահության մասին: «Մուտք գործելով բորսա՝ մենք պարտավորվում ենք գործել առավել թափանցիկ եւ միջազգային չափանիշներով: Վստահ ենք, որ առաջիկայում եւս հանդես կգանք նոր թողարկումներով»,- հավելել է նա:

Ինչպե՞ս գնել պարտատոմսեր եւ ի՞նչ պայմաններով

Արդեն հուլիսի 8-ից քաղաքացիներն ու ընկերությունները հնարավորություն ունեն գնելու «Ռենշինի» պարտատոմսերը: Ընկերությունը բորսայի երկրորդային (Bbond) ցուցակում է տեղադրել 3 տեսակի արժեթուղթ՝ եւ դրամով, եւ դոլարով:

Դրամային տարբերակ. 2,3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, 1 մլն դրամ անվանական արժեքով: Ապահովում է տարեկան բարձր՝ 12.00% եկամտաբերություն, շրջանառության ժամկետը 36 ամիս է:

Դոլարային 1-ին տարբերակ. 10 մլն դոլար ծավալով, 10,000 դոլար անվանական արժեքով: Եկամտաբերությունը՝ տարեկան 8.00%, ժամկետը՝ 36 ամիս:

Դոլարային 2-րդ տարբերակ. 10 մլն դոլար ծավալով, 10,000 դոլար անվանական արժեքով: Եկամտաբերությունը տարեկան 8.50% է, ժամկետը՝ 60 ամիս:

Այս պարտատոմսերի տեղաբաշխումը հաջողությամբ իրականացրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, որն էլ հետագայում երկրորդային շուկայում ապահովելու է դրանց ակտիվ առքուվաճառքը (հանդես գալով որպես շուկա ստեղծող): Ամերիաբանկի Կապիտալի շուկաների բաժնի ղեկավար Շուշանիկ Հովսեփյանը նկատել է, որ տնտեսության համար առանցքային ոլորտի առաջատարի այս թողարկումը հիանալի հնարավորություն է ներդրողների համար՝ բազմազանեցնելու իրենց խնայողություններն ու ռիսկերը թե՛ արժույթի, թե՛ ժամկետների առումով:

Այսպիսով, սա պարզապես ֆինանսական հերթական նորություն չէ կապիտալի շուկայում: Սա բացառիկ հնարավորություն է յուրաքանչյուր քաղաքացու համար՝ իր խնայողություններն աշխատեցնելու վստահելի եւ աչքով տեսանելի իրական հատվածում: Գնելով «Ռենշին»-ի պարտատոմսերը՝ ներդրողները ոչ միայն ապահովում են կայուն ու բարձր եկամուտ, այլեւ ուղղակիորեն դառնում են մայրաքաղաքի նոր դիմագիծը կերտող՝ միջազգային չափանիշներին համապատասխանող պատմական մեգանախագծերի մասնակիցը:

Bee Planet

«ՄԵՂՐԻ ՄՈԼՈՐԱԿ»

Գառնիում երիտասարդ ամուսիններ Նարեկ Սարգսյանն ու Ռուզաննա Դանիելյանը 3 տարի առաջ սեփական ուժերով ստեղծեցին իրենց «մեղրի մոլորակը»՝ Bee Planet-ը:

Սկզբում այն նախատեսված էր որպես փոքր արտադրամաս եւ մեղվանոց, սակայն ամուսիններն ընթացքում որոշում եւ էլ ավելի են զարգացնում իրենց գաղափարը. Bee Planet-ն այսօր ոչ միայն հյուրատուն է, այլեւ վայր, որտեղ կա մեղրի համտեսի սրահ, ապիթերապիայի (մեղվաբուժություն) հատուկ տնակ:

Այժմ ամուսիններն իրենց հյուրերին ներկայացնում են նաեւ մեղրային տարբեր արտադրանքներ՝ կրեմ-մեղրից մինչեւ մեղրի գինի եւ կոսմետիկ միջոցներ՝ օճառներ, դեմքի քսուկներ, չոր օծանելիք, մարմնի կարագ եւ այլն:

Bee Planet-ը Ակբա Ֆեդերացիայի եւ Impact Hub-ի համատեղ իրականացվող ֆելոուշիփի շահառուներից է: Ամիսներ շարունակ իրականացվող դասընթացների եւ հանդիպումների արդյունքում Նարեկն ու Ռուզաննան ձեռք են բերել բիզնես մտածողության նոր մոտեցումներ, ծանոթություններ ու փորձ:

«Աշխատանքների ամենասկզբում նախատեսում էինք ստեղծել միայն մեղվանոց եւ փոքր արտադրամաս, բայց որոշ ժամանակ անց մեր ծրագրերը փոխվեցին եւ որոշեցինք ստեղծել տարածք, որտեղ կլինի թե՛ հյուրատուն, թե՛ մեղրի համտեսի սրահ, եւ թե՛ մեղրային արտադրանքներ պատրաստելու արտադրամաս: Ընթացքում անհրաժեշտություն առաջացավ խորացնելու մեր գիտելիքները եւ մասնակցեցինք Ակբա Ֆեդերացիայի եւ Impact Hub-ի կողմից կազմակերպվող դասընթացներին, որի ընթացքում էլ բարելավեցինք մեր գիտելիքները»,- նշում է Bee Planet հյուրատան համահիմնադիր Նարեկ Սարգսյանը:

«Հյուրատան ստեղծման ճանապարհին շատ օրեր են եղել, երբ մտածել եմ, որ անհնարին է, էներգիան ու ռեսուրսները չեն բավականացնում, բայց հաջորդ օրը հիշում էի մեր նպատակի մասին ու շարունակում: Կարծում եմ, որ ամենակարեւորը հավատն է ինքդ քո եւ գաղափարի հանդեպ, որը գործում գլխավոր շարժիչն է»,- նշում է Bee Planet հյուրատան համահիմնադիր Ռուզաննա Դանիելյանը:

Ակբա Ֆեդերացիան Ակբա բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: Ակբա բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա Ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ամբողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու ամրապնդմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին: *(Գ)*

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 17-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Մարդկային ձայն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r դեպքերում անձի, գույքի եւ փաստաթղթերի նկատմամբ կարող է հետախուզում հայտարարվել:
Գայանե Սահակյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հարկադիր կատարողն իր որոշմամբ հայտարարում է անձի հետախուզում այդ անձի ներկայությունն ապահովելու եւ անհրաժեշտության դեպքում նրան ուղղված փաստաթղթեր հանձնելու նպատակով, եթե՝

1) դա նախատեսված է կատարման ենթակա ակտով.

2) պարտապանը փաստացի չի ստացել սույն օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հայտարարագիր ներկայացնելու մասին ծանուցումը կամ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գույքի հասանելիությունն ապահովելու մասին գրավոր պահանջը.

3) ոչ դրամական պահանջ սահմանող կատարման ենթակա ակտը հնարավոր չէ կատարել առանց պարտապանի կամ իրավասու անձի անձնական մասնակցության, եւ անհայտ է նրանց գտնվելու վայրը:

2. Հարկադիր կատարողն իր որոշմամբ հայտարարում է պարտապանի գույքի եւ փաստաթղթերի հետախուզում դրանց գտնվելու վայրը պարզելու նպատակով, եթե դա նախատեսված է կատարման ենթակա ակտով, կամ անհայտ է կատարման ենթակա ակտի հարկադիր կատարման համար անհրաժեշտ գույքի գտնվելու վայրը:

3. Անձի եւ տրանսպորտային միջոցների հետախուզումը հարկադիր կատարողի որոշման հիման վրա իրականացնում է ոստիկանությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված որոշման կայացմանը զուգահեռ՝ հարկադիր կատարողը կարող է անձի, գույքի եւ փաստաթղթերի հետախուզումն իրականացնելու համար ներգրավել անձանց, որոնք ունեն համապատասխան գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա):

5. Հարկադիր կատարողը կարող է գույքի եւ փաստաթղթերի հետախուզման մասին որոշումը հանձնել այն անձանց, որոնց տիրապետության տակ կարող են գտնվել հետախուզվող գույքը կամ փաստաթղթերը: Հետախուզվող գույքը կամ փաստաթղթերը տիրապետող անձինք պարտավոր են դրանց առկայության եւ կազմի վերաբերյալ տեղեկություններ հայտնել հարկադիր կատարողին:

6. Անձի հետախուզումը հարկադիր կատարողի որոշմամբ դադարեցվում է, եթե հետախուզվող անձը ներկայանում է հարկադիր կատարողին եւ ստանում իրեն հանձնման ենթակա փաստաթղթերը:

7. Գույքի եւ փաստաթղթերի հետախուզումը հարկադիր կատարողի որոշմամբ դադարեցվում է դրանց գտնվելու վայրը պարզելու դեպքում:

8. Անձի, գույքի եւ փաստաթղթերի հետախուզումը հարկադիր կատարողի որոշմամբ դադարեցվում է նաեւ այն դեպքերում, երբ վերացել են հետախուզման հիմքերը»:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են զբաղվածություն համարվող գործունեության տեսակները:
Արգիշտի Մանասյան, 61 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Զբաղվածություն համարվող գործունեության տեսակներն են՝

գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի)

քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը

անհատ ձեռնարկատիրական եւ նոտարի գործունեությունը

ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը

ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում եւ ուսուցման այլ ձեւերում առկա ուսուցումը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
Միասնական սոցիալական ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում՝ Իսակովի պողոտայում, բախվել են «Mazda»-ն եւ «ՎԱԶ-2106»-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 12+ 17 + 26 + 31
Կոտայքի լեռներ	+ 12 + 16 + 26 + 30
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 + 31 + 34
Գեղարքունիք	+ 12 + 16 + 23 + 28
Լոռի	+ 12 + 16 + 26 + 30
Տավուշ	+ 13 + 16 + 27 + 30
Արագածոտնի լեռներ	+ 11 + 15 + 25 + 29
Արագածոտնի նախալեռներ	+ 18 + 22 + 31 + 36

Արարատ	+ 19 + 22 + 33 + 36
Արմավիր	+ 19 + 22 + 36 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 12 + 16 + 25 + 29
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 23 + 36 + 38
Սյունիքի լեռներ	+ 12 + 15 + 23 + 27
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 18 + 28 + 31
Սյունիքի հովիտներ	+ 20 + 24 + 35 + 38
Երեւան	+ 21 + 23 + 36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*